USAID FROM THE AMERICAN PEOPLE

NDI
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԱՆԱՅՔ ԱԺԻ ԼՐԱՏՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀՈՒԼԻՍ 2011

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՖՈՒՖԱՆԻՇԸ ԿԱՆԱՅՔ ԵՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀԱՅ ԿԱՆԱՅՔ ԱՌԱՆՁՆԱՑՆՈՒՄ ԵՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԻՐԵՆՑ ԴԵՐՆ ՈՒ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՄԵԾԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ավելի քան 300 առաջնորդ հայ կանայք մասնակցեցին Ազգային ժողովրդավարական ինստիտուտի կողմից և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ կազմակերպված «Կանայք քաղաքականության մեջ» համաժողովին: Մայիսի 18-ից 19-ը տեղի ունեցած միջոցառման ժամանակ կին առաջնորդները կոչ արեցին համախմբվել 4 հիմնախնդրի լուծման շուրջ, որոնք են՝ կանանց քաղաքական մասնակցության խթանումը, կանանց տնտեսական խրախուսումը, կանանց առողջապահական խնդիրները, ընտանեկան և գենդերային բռնությունը:

Երկօրյա համաժողովին մասնակցել են քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, պետական կառավարման մարմիններ և մարզային կառույցներ ներկայացնող կանայք, որպեսզի քննարկեն Հայաստանի կանանց առջև ծառացած ամենահրատապ խնդիրները և համաձայնության գան այդ խնդիրների լուծման տարբերակների վերաբերյալ: Սա, իհարկե, զգալի ձեռքբերում է՝ նկատի առնելով այսօր Հայաստանի քաղաքականության մեջ տիրող բևեռացումը և անվստահությունը:

Համաժողովի ընթացքում կանայք քննարկեցին առկա խնդիրների վերաբերյալ առաջարկությունների մշակման ընդհանուր փաթեթը: Քաղաքական և տնտեսական ոլորտներում, օրինակ, առաջարկվեց կանանց համար քվոտա սահմանել՝ կանանց քաղաքական մասնակցությունը պետական և տեղական կառավարման մարմիններում մեծացնելու համար, ինչպես նաև ընդունել գենդերային հավասարության օրենք՝ կանանց համար բիզնեսի հնարավորությունները ընդլայնելու և աշխատանքային պայմանները բարելավելու նպատակով: Բացի այդ համաժողովի մասնակիցները Հայաստանի Հանրապետության նախագահին ուղղված նամակ ստորագրեցին, որում առաջարկվում էր համամասնական ընտրական ցուցակներում կանանց համար սահմանել 30 տոկոսանոց քվոտա:

Միջոցառման հանրային արձագանքն արդեն տալիս է իր արդյունքը: Համաժողովի անմիջապես հաջորդ օրը ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն իր ելույթում կոչ արեց գործադիր և օրենսդիր մարմիններում կանանց մասնակցությունը հասցնել մինչև 30 տոկոս: Համաժողովից մեկ շաբաթ անց ՀՀ Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ ընդունված «Ընտրական օրենսգրքի» նախագծում ներառված էր օրենսդրական պահանջ, ըստ որի համամասնական ցուցակներում կանայք պետք է կազմեն 20 տոկոս, ինչպես նաև երկրորդ համարից սկսած ամեն հինգերորդ թեկնածուն պետք է լինի կին:

Այս դրույթը թույլ է տալիս խուսափել կանանց՝ համամասնական ցուցակների վերջում ընդգրկելուց, ինչը վերջիններիս նախկինում շատ քիչ հնարավորություն էր ընձեռում կամ ընդհանրապես թույլ չէր տալիս ընտրվելու: Համաձայն «Ընտրական օրենսգրքի» նախագծի՝ մեծամասնական թեկնածուների համար նախընտրական գրավը նվազում է 2.5 միլիոնից մինչև 1 միլիոն ՀՀ դրամ: Այս դրույթը հնարավորություն կտա պակաս ռեսուրսներ ունեցող թեկնածուներին, ինչպիսիք կանայք են, առաջադրվել որպես մեծամասնական թեկնածուներ: Ազգային ժողովի վերջին ընտրություններում ընդամենը 5 կնոջ թեկնածություն էր առաջադրված, որոնցից ոչ մեկը չընտրվեց: Մինչ «Ընտրական օրենսգրքի» նախագիծն ընդունելը այն դեռևս պետք է վերջնական փուլ անցնի, թեև սովորաբար 3-րդ ընթերցումը ենթադրում է ընդամենը տեխնիկական, չնչին փոփոխություններ:

Այդ պատճառով ենթադրվում է, որ օրենքի ուժ կստանա «Ընտրական օրենսգրքի» ներկայիս նախագիծը:

Համաժողովի ժամանակ հնչած առաջարկություններն այն հիմնախնդիրների լուծումներն են, որոնք երկար ժամանակ անտեսված են եղել Հայաստանում: Առաջիկայում կին առաջնորդները կօգտագործեն այս փաստաթուղթը՝ խրախուսելով քաղաքական կուսակցություններին բարձրացնել նրանում տեղ գտած հարցերը՝ գալիք տարվա խորհրդարանական ընտրությունների նախընտրական քարոզարշավներին նախապատրաստվելիս: Սա նաև հնարավորություն է ընձեռում անհատ կին թեկնածուներին, որոնք պատրաստվում են իրենց թեկնածությունն առաջադրել, այս հիմնախնդիրներն ընդգրկել իրենց նախընտրական պլատֆորմներում: Քաղաքացիական հասարակության խմբերը կարող են քարոզել այս առաջարկությունների իրականացման օգտին, ինչպես նաև վերահսկել քաղաքական կուսակցությունների և կառավարության կողմից տրված խոստումների իրագործման գործընթացը:

Հայեցակարգի առաջարկություններն առաջիկա մի քանի ամսվա ընթացքում կվերամշակվեն աշխատանքային խմբերի կողմից, որոնք կաշխատեն առանձին հիմնախնդիրների վրա: Խմբերում կընդգրկվեն համաժողովի մասնակիցներ թե՛ Երևանից և թե՛ մարզերից, ինչպես նաև կուսակցությունների և ՀԿ-ների անդամներ: Համապատասխան հիմնախնդիրների վերաբերյալ առաջարկություններ զարգացնելու նպատակով կիրավիրվեն նաև փորձագետներ գիտական ոլորտից, միջազգային կազմակերպություններից և կառավարությունից:

Կոնֆերանսի ժամանակ իրենց միջազգային փորձը մասնակիցների հետ կիսեցին նաև արտերկրից ժամանած մի քանի անվանի կին առաջնորդներ, որոնց թվում՝ կանանց կարգավիճակի հարցերով ՄԱԿ-ի հանձնաժողովում Միացյալ նահանգների ներկայացուցիչ Մերիլ Ֆրենքը, Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Մարի Յովանովիչը, Հայաստանում և Վրաստանում Շվեդիայի դեսպան Դայանա Ջանսը, Միսուրի նահանգի պետքարտուղար Ռոբին Քարնահանը, Ալբանիայում Մակեդոնիայի նախկին դեսպան և պատգամավոր Բլագորոդնա Մինգովա Կրապիևան, Հրայր Մանուկյան հիմնադրամի տնօրեն և «Սոցիալիստ ինտերնացիոնալ» միջազգային կազմակերպության փոխնախագահ Մարիա Թիթիզյանը, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան հանրային կապերի պատասխանատու Կառեն Ռոբլին:

youth participation civic education volunteerism

ԿԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ

«ԿԱՆԱՅՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ՇՐՋԱԴԱՐՁԱՅԻՆ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ
ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Հարցազրույց ԱՄՆ Միջազգային հարաբերությունների Ազգային ժողովրդավարության ինստիտուտի (ԱԺԻ) Երևանյան գրասենյակի տնօրեն Գեղամ Սարգսյանի հետ

-Հայաստանում կանանց մասնակցությունը քաղաքական գործընթացներին խթանելու, որոշումների ընդունման ոլորտում նրանց ընդգրկվածությունը մեծացնելու նպատակով համաժողով կազմակերպելու գաղափարը Ազգային ժողովրդավարության ինստիտուտինն էր: Լայնածավալ տեսական -ուսուցողական և կազմակերպչական աշխատանքների շնորհիվ այդ գաղափարը բավական սեղմ ժամկետներում կյանքի կոչեց ԱԺԻ Երևանյան գրասենյակը: Ինչո՞վ էր պայմանավորված նման թեմայի ընտրությունը, և որքանո՞վ է այն կարևոր հայ հանրության համար:

Գ. Սարգսյան. -Ժողովրդավարական քաղաքական մշակույթի ձևավորումն անհնար է պատկերացնել առանց քաղաքական գործընթացներին կանանց մասնակցության ակտիվացման: Ժողովրդավարության աջակցման ծրագրերի շրջանակներում ԱԺԻ-ն քաջալերում է ՀՀ քաղաքացիներին, հատկապես՝կանանց և երիտասարդներին, բարձրացնելու իրենց հուզող խնդիրները և ակտիվ քաղաքացիական դիրքորոշումներով ու գործողություններով դրդել երկրի քաղաքական վերախավին՝վարելու քաղաքացիների շահերից բխող ու կարիքներին համապատասխան քաղաքականություն: Դեռևս 2010թ.-ին հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների հետ մեր «ֆոկուս» խմբերի ուսումնասիրություններով փորձել ենք բացահայտել կանանց և երիտասարդների քաղաքական մասնակցությանն առնչվող առկա մարտահրավերներն ու հնարավորությունները: Այս հետազոտությամբ մեծացավ այս երկու ոչ բավարար չափով ներկայացված ընտրական խմբերի կարիքների և շահերի մասին իրազեկությունը, հանձնարարականներ տրվեցին քաղաքացիական հասարակությանը, քաղաքական կուսակցություններին, նաև միջազգային հանրությանը՝ վերոնշյալ խմբերի ակտիվ ներգրավման վերաբերյալ: Ոլորտում տիրող իրավիճակի գնահատումը թույլ տվեց գալ այն եզրահանգման, որ կանանց քաղաքական և քաղաքացիական անբավարար ներգրավվածությունը պատճառաբանված է լուրջ քաղաքական, սոցիալական և տնտեսական հիմնախնդիրներով: Դրանց՝ ազգային մակարդակով քննարկումը, քաղաքական և հանրային ուժերի լայն մասնակցությամբ կանանց հիմնահարցերի սահմանումը և դրանց լուծումների շուրջ կանանց մտավոր ներուժի համախմբումն օրվա հրամայականն էր:

2012թ.-ի խորհրդարանական և 2013թ.-ի նախագահական ընտրությունների շեմին ԱԺԻ-ն ջանքեր է գործադրում մեծացնելու կանանց դերը քաղաքական երկխոսության մեջ և քայլեր ձեռնարկում գենդերային խնդիրների բարելավման համար: Այդ քայլերից էր «Կանայք քաղաքականության մեջ» համաժողովի գաղափարի իրագործումը, ինչին մեծապես աջակցեցին ԱՄՆ ՄԶԳ-ն, ՄԱԿ-ը, Հայաստանում՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդական Միացյալ Թագավորության դեսպանատունը, Բրիտանական Խորհուրդը:

-Ինչպիսի՞ն է համաժողովի արդյունքների Ձեր գնահատականը. լիարժեքորեն իրագործվե՞ց մտահղացման նպատակը:

Գ.Սարգսյան. - Մշակվեց կանանց հիմնախնդիրների հայեցակարգի նախագիծ, ինչը համաժողովի մասնակիցների և միջազգային հեղինակավոր փորձագետների համատեղ ջանադիր աշխատանքի արդյունքն էր: Կանայք ապացուցեցին, որ, անկախ իրենց քաղաքական դիրքորոշումներից ու նախասիրություններից, կարող են միատեղել իրենց ուժերը հասարակական հնչեղություն ունեցող ու նեղ քաղաքական նպատակադրամներից վեր դասվող խնդիրների շուրջ և միասնաբար պաշտպանել իրենց ընդհանրական շահերը: Նրանց համատեղ գործողությունները, ըստ հայեցակարգի սահմանած առաջնահերթության, ուղղված են լինելու կանանց քաղաքական մասնակցության մակարդակը բարձրացնելուն, տնտեսական մասնակցությունը խրախուսելուն, ընտանեկան և գենդերային բռնության նվազեցմանը և կանանց առողջության ապահովման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը: Ստեղծված է հիմնախնդիրների լուծման հիմնարար փաստաթուղթ, որն առաջիկայում լուրջ լրամշակման փուլով անցնելուց հետո կարող է հիմք դառնալ կանանց հետագա գործողությունները ծրագրելու և իրագործելու համար:

-Արդյոք առկա՞ է այն ներուժը, որ ի զորու կլինի կյանքի կոչելու կանանց հիմնախնդիրների հայեցակարգում ձևակերպված նպատակները:

Գ.Սարգսյան.- Այդ ներուժի և կարողության վառ ապացույցը համաժողովի օրերին երեք հարյուրից ավելի կին մասնակիցների համագործակցված աշխատանքն էր: Նրանք վճռական են՝ իրենց որոշումներն ի կատար անելու, նրանցից շատերն առաջնորդներ են իրենց գործունեության ոլորտում և քանիցս ապացուցել են, որ իրենց քաղաքական մասնակցությամբ կարող են դրական փոփոխություններ կատարել և ժողովրդավարական ազդեցություն ունենալ համայնքների, օրենսդիր մարմնի, քաղաքական կուսակցությունների և քաղաքացիների կյանքի վրա:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄՆ Է

ԱՄՆ Միջազգային հարաբերությունների Ազգային ժողովրդավարության ինստիտուտը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որի նպատակը ժողովրդավարության ամրապնդումն ու հզորացումն է՝ քաղաքացիների մասնակցության, թափանցիկ և հաշվետու կառավարության միջոցով:

Հիմնադրվելով 1983թ.-ին՝ ԱԺԻ-ն աշխատանքներ է ծավալել 125 երկրում՝ համախմբելով առանձին անհատների և խմբերի՝ գաղափարների, գիտելիքի և փորձի փոխանակման համար: ԱԺԻ ուղղությունը՝ ժողովրդավարության միասնական մոդել գոյություն չունի, սակայն առանցքային սկզբունքները հատուկ են ժողովրդավարության բոլոր տիպերին: ԱԺԻ-ն օժանդակում է քաղաքական և քաղաքացիական կազմակերպությունների հիմնադրմանը, նպաստում արդար ընտրությունների կայացմանը և քաղաքացիների մասնակցության խթանմանը, հաշվետու և թափանցիկ կառավարման ամրապնդմանը: 1995թ.-ից ԱԺԻ-ն Հայաստանում իր ջանքերը կենտրոնացրել է կուսակցական շինարարության և քաղաքացիական հասարակության հզորացմանն առնչվող ծրագրերի իրագործման ուղղությամբ: ԱԺԻ քաղաքական ծրագիրը նպաստում է բազմակուսակցական համակարգի զարգացմանը Հայաստանում՝ կուսակցական ակտիվիստներին տրամադրելով հմտություններ՝առավել ներկայացուցչական, հաշվետու, թափանցիկ և ընտրություններում մրցունակ քաղաքական կուսակցություններ կառուցելու համար: Կուսակցությունների ղեկավարների և իշխանության ներկայացուցիչների միջև երկխոսության կայացմանը նպաստելու համար ԱԺԻ-ն Մամուլի Ազգային ակումբի հետ համատեղ կառավարության և ընդդիմության ներկայացուցիչների միջև անցկացնում է քաղաքական բանավեճեր՝ երկրի առջև ծառացած հիմնախնդիրների վերաբերյալ: Սրանք այն հազվագյուտ միջոցառումներից են, որոնք քաղաքական կուսակցությունների ղեկավարներին Հայաստանի քաղաքական բևեռացման պայմաններում հնարավորություն են ընձեռում միմյանց հետ կառուցողական երկխոսություն վարել:

6

ԿԱՆԱՅՔ՝ ՀԱՆՈՒՆ ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

«Կանայք քաղաքականության մեջ» համաժողովի քրոնիկոնը.մայիս 18-19, 2011 թվական

Հայաստանի՝ վերջին ամիսների հասարակական-քաղաքական առավել ակնառու իրադարձությունների շարքում իրավամբ իր տեղն ունի «Կանայք քաղաքականությանմեջ» համաժողովը, որի ընթացքում սահմանվեցին կանանց հուզող գերակա հիմնախնդիրները, և ըստ այդմ մշակվեց հայեցակարգ: Երկօրյա համաժողովի ընթացքում ծավալված բուռն և արդյունավետ քննարկումների ընթացքում ավելի քան 300 հայ կին առաջնորդներն առանձնացրին այն ոլորտները, որոնցում պետք է մշակվեին քաղաքական լուծումներ՝ կանանց մտահոգությունները բարձրաձայնելու, դրանց հանրային հնչեղություն տալու և օրենսդրական դաշտի բարեփոխումներ առաջարկելու համար:

Համաժողովի պատվիրակները ՀՀ-ում գործող 131 զանազան քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, հանրային կառույցների, գիտական, կրթական, մշակութային ոլորտների, ինչպես նաև՝ գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներն էին: Համաժողովի մասնակիցների՝ տարաբնույթ ոլորտների համակողմանի իմացությունը հնարավորություն ընձեռնեց համապարփակ կերպով ներկայացնելու մեզանում կանանց իրավունքների բնագավառում առկա հիմնախնդիրները և ի մի բերելու դրանց լուծման ուղիների վերաբերյալ առաջարկությունները:

Հիմնախնդիրների շրջանակը նախանշվել էր դեռևս համաժողովի նախօրեին հանրային կառույցներ ներկայացնող կանանց մասնակցությամբ ԱԺԻ կողմից անցկացված քառօրյա գործնական դասընթացների ընթացքում:

Մինչ համաժողովի բուն աշխատանքների մեկնարկը մասնակիցներին ոգեշնչող ելույթներով ողջունեցին Եվրոպայից և Միացյալ Նահանգներից ժամանած անվանի կին քաղաքական գործիչներ, որոնք քաղաքական գործչի իրենց փորձառությունը հաղորդեցին՝ հորդորելով հայաստանաբնակ կանանց լինել վճռական և նպատակասլաց՝ հանրային կյանքում առաջնորդության հասնելու իրենց վճռում: Համաժողովի աշխատանքներին հաջողություն մաղթեցին նաև դեսպաններ Մարի Յովանովիչը,

Հայեցակարգի նախագծի երկօրյա համատեղ մշակման արդյունքում ձևավորվել է համախոհների մի հզոր խումբ:

Չարլզ Լոնսդեյլին, ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակի մշտական համակարգող Դաֆինա Գերչևան, ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության փոխտնօրեն Զոն Սանը: Համաժողովին տեսանյութի միջոցով իր ուղերձն էր հղել Կանանց գլոբալ հարցերով ԱՄՆ դեսպան Մելանի Վերվերը: Համաժողովի աշխատանքները վարեցին ԱԺԻ Եվրասիա թիմի ղեկավար Լորա Ջյուեթը և կանանց հարցերով անկախ փորձագետ Ստեֆանի Ֆոստերը, որ հայտնի են տեղական և միջազգային քաղաքականության շահերի պաշտպանության, ծրագրերի մշակման և օրենսդրության ոլորտում ունեցած իրենց փորձառությամբ:

Միջազգային փորձագետների խորհրդատվական աջակցությամբ համաժողովի աշխատանքային խմբերը երկօրյա ծավալուն և թեժ քննարկումների ընթացքում ստեղծեցին կանանց առաջնահերթ ընդհանուր հիմնախնդիրները սահմանող հակիրճ ու համոզիչ փաստաթուղթ՝ կոնկրետ քաղաքական առաջարկներով, որոնց իրականացումը կօգնի կանանց ավելի մրցունակ դառնալ կառավարության, տնտեսության և քաղաքականության մեջ:

«ԿԱՆԱՅՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ ԵՆ ԻՐԵՆՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ»

Կանանց գլոբալ հարցերով ԱՄՆ դեսպան Մելանի Վերվերի ողջույնի խոսքից՝ « Կանայք քաղաքականության մեջ» համաժողովի մասնակիցներին

Հպարտ եմ, որ հնարավորություն ունեմ ողջունելու բոլորիդ՝ քաղաքականության մեջ կանանց արդյունավետ մասնակցությունը խրա-խուսելու գործում:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Ազգայի Ժողովրդավարության Ինստիտուտին՝ ողջ աշխարհում քաղաքականության և ժողովրդավարական կառավարման գործում կանանց ակտիվ մասնակցությանը զորակցելու համար:

ԱԺԻ առաքելությունը բազմաթիվ երկրներում կանանց շահագրգռել է առաջադրվելու քաղաքական պաշտոններում, աջակցել է արդյունավետ քարոզարշավների անցկացմանը և քաղաքականության մեջ հաջողելուն: Աշխարհն, իրոք, կարիք ունի իրական ժողովրդավարության՝ հաշվետու կառավարությունների և արդյունավետ քաղաքականության միջոցով կանանց ներգրավվածության մակարդակը բարձրացնելու համար: Ահա թե ինչու է այդքան կարևորվում այն, ինչ դուք անում եք: Կանանց առաջնորդությունը նպաստում է երկրների կայուն զարգացմանը: Ողջ աշխարհում աճում է քաղաքական դաշտ և կառավարություն մուտք գործող կանանց թիվը: Բայց դեռևս նրանց նվաճումները դժվարին են, իսկ նրանց առաջնորդությունը շատ հաճախ չի ճանաչվում: Կանայք դեռևս զգալիորեն թերի են ներկայացված աշխարհում: Նրանք կազմում են աշխարհի բնակչության կեսը, սակայն զբաղեցնում են ազգային կառավարությունների մեկ հինգերորդից էլ պակաս պաշտոնները: Սա նշանակում է, որ ընտանիքում և հասարակությունում կնոջն առնչվող կարևոր որոշումներն ընդունվում են առանց կնոջ ձայնի իրավունքի: Շատ կանայք ուղղակի երկնչում են մուտք գործել քաղաքական կյանք՝ չունենալով հաջողության հասնելու բավարար ռեսուրսներ՝ ներառյալ ֆինանսական միջոցները, ազատ ժամանակը, իրենց ընտանիքների աջակցությունը, ինչի կարիքը նրանք այնքան ունեն:

Ընտրվելով կինը պետք է նաև ջանքեր գործադրի սեփական կարողությունները զարգացնելու ուղղությամբ՝ արդյունավետ և պատասխանատու կերպով կառավարելու համար, զարգացնի սոցիալական ցանցեր՝ տալով պետական նպաստներ, օգնի կանանց հաղթահարելու պատնեշներ և փորձի կոտրել կարծրատիպերը, որ հեռու են պահում նրանց քաղաքականությունից: Սա շատ վճռորոշ է: Ահա թե ինչու այսպիսի միջոցառումները, որոնցից մեկին դուք այժմ մասնակցում եք, այդքան կարևոր են:

Կանայք փոփոխությունների գործակալներ են իրենց հասարակություններում: Նրանք խթանում են քաղաքական և սոցիալական առաջընթացը՝ ստեղծելով խաղաղություն և կայունություն:

Ներդրեք ձեր կարողությունները, էներգիան, պատրաստակամությունը՝ավելի լավ ապագա կառուցելու համար: Կնոջ ներգրավումը կառավարությունում, քաղաքացիական հասարակությունում, բիզնեսում, կրթության և շատ ուրիշ բնագավառներում վճռորոշ նշանակություն ունի՝ հաղթահարելու համար հասարակությունում առկա մարտահրավերները:

ԱՄՆ պետքարտուղար Հ. Քլինթոնը հաճախ ասում է. « Տաղանդն ունիվերսալ է, իսկ հնարավորությունները՝ ոչ»: Երբ կանանց հնարավորություն է տրվում, նրանք դա ներդնում են իրենց ընտանիքներում և համայնքներում:

Կցանկանայի քաջալերել ձեզ՝ հայ առաջնորդ կանանց, շատ բարդ ժամանակներում տարվող ձեր աշխատանքի համար: Ձեր հաջողությունը շատ կարևոր է ոչ միայն ձեր հասարակության մեջ կնոջ ներգրավման և ներկայացվածության, այլև՝ ձեր բոլորի հաջողության, ձեր երկրում ժողովրդավարության կայացման համար:

Մենք կսպասենք ձեր հաջողությունների մասին լուրերին և վստահ ենք, որ դուք լավագույնս կնպաստեք ձեր երկրի առաջընթացին:

ԿԱՆԱՅՔ ՀԻՄՆԱՎՈՐԱՊԵՍ ԷԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Կանանց ազգային համաժողովի նախապատրաստական փուլում Ազգային Ժողովրդավարության Ինստիտուտի կազմակերպած գործնական պարապմունքների նպատակն էր որոշել ամենից հրատապ խնդիրները, որոնց կանայք այսօր բախվում են Հայաստանում, կերտել այդ խնդիրները սահմանող ու հնարավոր լուծումները առաջարկող հայեցակարգի նախագծի աշխատանքային տարբերակ:

Դասընթացների մասնակից 110 կանանց թվում կային ընտրված կին պաշտոնյաներ, իշխանամետ և ընդդիմադիր քաղաքական կուսակցությունների անդամներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Նրանք ներկայացնում էին Հայաստանի տարբեր մարզերը, տարբեր գաղափարախոսությունների կրողներ էին և պատկանում էին տարբեր տարիքային խմբերի: Նրանք «Կին առաջնորդ» ֆորումի համակարգող խորհրդի անդամներ էին, կանանց, երիտասարդների առաջնորդության և Կին թեկնածուների դպրոցների ունկնդիրներն ու շրջանավարտները, «Ընտրությունը քոնն է» ՀԿ տասնյակ կամավորներ: Խրախուսելով նման բազմազանությունը՝ ԱԺԻ-ին հաջողվեց հասնել նրան, որ համաժողովից առաջ կազմակերպված գործնական քննարկումների ընթացքում առանձնացված խնդիրները և առաջարկվող լուծումները ներկայացնեն տարբեր հասարակական շերտերի, բոլոր խավերի ու տարիքային խմբերի կարիքներն ու կարծիքները:

Գործնական դասընթացների բոլոր օրերն անցան նույն օրակարգով: Կին մասնակիցները, իրենց իսկ սահմանած խնդիրների շուրջ քննարկումներ ծավալելու և լուծումները մշակելու նպատակով, բաժանվեցին աշխատանքային խմբերի: Այնուհետև յուրաքանչյուր խմբի մշակած երեքից հինգ լուծումների առաջարկներ փոխադարձաբար ներկայացվեցին մյուս խմբերի դատին: Աշխատանքային խմբերը, հաշվի առնելով հնչած դիտողություններն ու հավելումները, վերամշակեցին հայեցակարգերը: Վերջնական տարբերակում ընդգրկվեցին միայն այն լուծումները, որոնց շուրջ համաձայնության էին եկել բոլոր մասնակիցները:

Ամեն մի գործնական դասընթացի ավարտին մասնակիցները ներկայացրեցին հիմնախնդիրների չորս ոլորտ՝ յուրաքանչյուրի համար երեքական լուծումների առաջարկներով: Դասընթացներին մասնակից խմբերի նախապես սահմանած հիմնախնդիրները վերաբերում էին կանանց քաղաքական մասնակցության, ընտանեկան և գենդերային բռնության, տնտեսական քաջալերման, զբաղվածության ու առողջապահության ոլորտներին: Սերելով տարբեր բնակավայրերից, պատկանելով զանազան տարիքային խմբերի , կրելով իրարից տարբերվող գաղափարներ և գործունեության տարբեր բնագավառներ ներկայացնելով՝ այդուհանդերձ կանայք արդյունավետ կերպով հաղորդակցվեցին և համաձայնության եկան թեմաներից շատերի շուրջ: Ստեղծվեց աշխատանքային փաստաթուղթ, որը շրջառության մեջ դրվեց «Կանայք քաղաքականության մեջ» համաժողովի շրջանակներում ձևավորված՝ արդեն 50-70 մասնակից ունեցող աշխատանքային խմբերում: Փաստաթուղթը զգալիորեն փոփոխվելուց և խմբագրվելուց հետո համաժողովի կողմից հռչակվեց իբրև կանանց հիմնախնդիրների հայեցակարգի նախագիծ:

Համաժողովի բացման իր խոսքում դեսպան Յովանովիչն ընդգծեց որ Հայաստանն իր լիարժեք ներուժն իրագործելու համար պետք է հենվի իր բոլոր տաղանդների վրա, այդ թվում՝ նաև կանանց:

« ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԳԵՑՆՈՒՄ Է ՇՈՇԱՓԵԼԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ »

Կանանց դրական ազդեցությունը քաղաքականության ասպարեզում անժխտելի է: Նրանց քաղաքական մասնակցությունը հանգեցնում է շոշափելի ձեռքբերումների ժողովրդավարության ասպարեզում, առավել լայն արձագանքի՝ քաղաքացիների կարիքների հանդեպ, արդյունավետ համագործակցության՝ կուսակցական շարքերում և էթնիկական խմբերի միջև , և ավելի կայուն խաղաղության: Ինչքան շատ են կանայք ընտրվում գործադիր և օրենսդիր մարմիններում, այնքան ավելի է կարևորվում կյանքի որակի աճին նպաստող, ընտանիքի, կանանց, էթնիկական և ազգային փոքրամասնությունների առաջնահերթ խնդիրներն արտացոլող օրենքների մշակումն ու ընդունումը: Շատ ավելի մեծ է կանանց՝ նաև բազմակուսակցական միջավայրում համագործակցված և արդյունավետ աշխատանք ծավալելու, կարևորագույն խնդիրների շուրջ համաձայնության գալու և

ԱԺԻ երևանյան գրասենյակի հասարակական ծրագրերի ղեկավար Մ. Մերֆին և ԱԺԻ կանանց քաղաքական մասնակցության ծրագրի պատասխանատու Քերոլայլ Հարբերը՝ համաժողովին նախորդած գործնական պարապմունքները վարելիս:

դրա արդյունքում օրենսդրական դաշտի կատարելագործմանը հասնելու հավանականությունը:

Կին օրենսդիրները, որպես կանոն, ավելի զգայուն են համայնքային խնդիրների հանդեպ, ուստի՝ ընտրողների կարծիքներին ավելի արագ են արձագանքում: Կանայք խորապես նվիրված են խաղաղության ամրապնդման գործին և օժտված են հակամարտող կողմերին բանակցային սեղանի շուրջ հավաքելու եզակի շնորհով:

Կանանց՝ քաղաքական առաջնորդի դեր ստանձնելու շնորհիվ շատ ավելի արագ դրական փոփոխություններ են արձանագրվում կրթության, առողջապահության և սոցիալական բարեկեցությունն ապահովող այլ բնագավառներում, կոնկրետ քայլեր են ձեռնարկվում ժողովրդավարության տարածման և ամրապնդման ուղղությամբ: Հանրահայտ կարծիք կա , որ կին քաղաքական գործիչներին շատ ավելի է հատուկ ազնվությունն ու պատասխանատվությունը, որակներ, որ մեծացնում են ընտրողների վստահությունը ժողովրդավարական և այլ ներկայացուցչական հաստատությունների հանդեպ: Հետևաբար, շարունակական զարգացում ապահովելու և ուժեղ ու կայուն ժողովրդավարություն կառուցելու համար հայ կանանց պետք է աջակցել՝դառնալու քաղաքական և համայնքային առաջնորդներ:

Մայքլ Մերֆի
ԱԺԻ երևանյան գրասենյակի
հասարակական ծրագրերի ղեկավար

«ՄԵՆՔ ՏԱՐԲԵՐ ԵՆՔ, ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐՆ ԵՆ ՆՈՒՅՆԸ»

Վերջին տարիներին մասնակցել եմ շատ ընտրական ծրագրերի ու քարոզարշավների և աշխատել եմ բազմաթիվ կանանց ու կանանց խմբերի հետ՝օգնելով նրանց քաղաքական մասնակցության և քարոզելու մարտավարություն ձևավորել: Ամբողջ աշխարհում կանանց ուշադրության կենտրոնում մեծամասամբ նույն հիմնախնդիրներն են: Թե՛ Հայաստանում, Հաիթիում, Կամերունում, Իրաքում և թե՛ Միացյալ Նահանգներում կանայք ցանկանում են, որպեսզի իրենց կառավարությունը, ընտրված պաշտոնյաները և քաղաքական կուսակցությունները բարձրացնեն կանանց համար կարևոր հարցերը: Հայաստանում կանայք շատ ընդհանուր հիմնախնդիրներ ունեն, և դրանում կարելի է համոզվել՝ Հայաստանում քննարկված խնդիրները դիտարկելով: Մենք բոլոր պատասխանները չունենք, և կարծում եմ՝ պետք է մասնակցենք բոլոր երկրներում որոշումների կայացման գործընթացին կանանց մասնակցությունն ապահովելու վերաբերյալ համընդհանուր քննարկմանը:

ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ (ՊԼԱՏՖՈՐՄԻ) ՆԱԽԱԳԻԾ

Կանանց քաղաքական մասնակցությունը

1. Սահմանել կանանց քվոտա Ազգային Ժողովի, Երևանի ավագանու և տեղական ինքնակառավարման մարմինների համար: Քվոտան կսահմանի հետևյալը.
ա) Կանայք պետք է համամասնական ընտրակարգով ընտրացուցակի 50% -ը կազմեն:
բ) Ամեն երկրորդը ցուցակում պետք է լինի կին:
գ) Այն կուսակցությունները, որոնք կհաղթահարեն 5% ընտրական շեմը, պետք է ապահովեն կանանց 50% ներկայացվածությունն իրենց կուսակցությունների համամասնական ցուցակներում՝ Ազգային Ժողովում մանդատներ ստանալու համար:
2. Ընդունել հավասար հնարավորություններ սահմանող օրենք, որը հիմք կհանդիսանա հավասար հնարավորությունների հանձնաժողովի ստեղծման համար, որը պատասխանատու կլինի կանանց քաղաքական մասնակցությունը խթանող այլ քաղաքական լուծումների իրականացման համար: Օրինակ. կառավարության կողմից ֆինանսավորում՝ կանանց կարողությունների զարգացման համար համապետական և տեղական մակարդակներում, կառավարության կողմից ֆինանսավորում՝ կին թեկնածուների հեռուստատեսությամբ հեռարձակվող քարոզարշավների համար:
3. Եթե որևիցե պատճառով կին պատգամավորը հրաժարվում է մանդատից, նրան փոխարինում է այլ կին:

Կանանց տնտեսական մասնակցության խրախուսումը

1. Բարելավել գործարարության և աշխատանքի հնարավորությունները կանանց համար՝ ապահովելով գենդերային հավասարության մասին օրենքի ընդունումը, ինչպես նաև՝ վերապատրաստման դասընթացներ կազմակերպել և վարկեր և այլ խթաններ տրամադրել կանանց պատկանող ձեռնարկություններին, հոգալ կանանց կարիքները գյուղական շրջաններում և հատուկ կարիքներ ունեցող շրջաններում (օրինակ՝ երկրաշարժից տուժած և սահմանամերձ տարածքներում):
2. Բարելավել աշխատանքի վայրի պայմանները կանանց համար՝ խթանների տրամադրմամբ ընդլայնելով ցերեկային խնամքի ծառայությունների, մանկապարտեզների և հետդպրոցական ծրագրերի հասանելիությունը, ինչպես նաև՝ ապահովել մայրության արձակուրդի համարժեքությունը, ավելացնել երեխաների խնամքի համար ծախսված տարիների՝ թոշակի հաշվարկի մեջ ներառվող տարիների թիվը:
3. Սահմանել աշխատանքի վայրում խտրականությունը բացառող գործող օրենքների վերաբերյալ հաշվետվության, վերահսկողության և կիրառման արդյունավետ մեխանիզմներ, ներառյալ՝ տրամաբանական պատիժներ և պատժամիջոցներ, ինչպես նաև՝ բարձրացնել միությունների դերը կանանց իրավունքների պաշտպանության գործում:
4. Առավել հասանելի դարձնել որակյալ կրթությունը, այդ թվում՝ բարձրացնել ուսուցիչների աշխատավարձը և որակավորումը միջնակարգ դպրոցներում (հատկապես գյուղական շրջաններում), ապահովել բարձրագույն կրթության մատչելիությունը, մասնագիտական և մեծահասակների կրթության հասանելիությունը և գյուղատնտեսական կրթություն՝ կանանց համար գյուղական շրջաններում:

Ընտանեկան և գենդերային բռնության նվազեցում

1. Տալ ընտանեկան բռնության՝ միջազգային նորմերին համապատասխանող սահմանումը «Քրեական օրենսգրքում» և սահմանել միջազգային նորմերին համապատասխանող պատժամիջոցներ հանցանքը գործելու համար:

Համաժողովի արդյունքների ամփոփման պահն է: Մասնակիցները քվեարկում են հայեցակարգի նախագիծն ընդունելու օգտին:

2. Կազմակերպել հասարակության իրազեկման քարոզարշավներ բոլոր շահագրգիռ կողմերի և կազմակերպությունների մասնակցությամբ, որոնք կներառեն համաժողովներ, սեմինարներ և կրթական ծրագրեր հասարակության և ոստիկանության համար: Այս քարոզարշավում կընդգրկվի նաև բռնության զոհերի համար նախատեսված թեժ գծի տարածումը Հայաստանի բոլոր շրջաններում:
3. Հիմնել կենտրոններ կամ ապաստաններ ընտանեկան բռնության զոհերի համար, որոնք կապահովեն գաղտնիություն, բուժօգնություն, հոգեբանական խորհրդատվություն, իրավաբանական խորհրդատվություն, բռնության զոհերի համար ուսուցողական դասընթացներ, որոնք կօգնեն նրանց ֆինանսապես կայուն լինել: Այս ապաստանները կֆինանսավորվեն կառավարության կողմից և այլ աղբյուրներից, բայց կվերահսկվեն հասարակական կազմակերպությունների կողմից:

Կանանց առողջություն

1. Պարտադիր բժշկական ապահովագրության նվազագույն փաթեթ՝ իգական սեռի բոլոր ներկայացուցիչներին: Կիրառել շքեղության հարկը, ինչպես նաև՝ հանքահումքային արդյուաբերության նկատմամբ հարկերի կիրառումից ստացված հասույթն ուղղել պետության կողմից հատկացվող պարտադիր բուժապահովագրական նվազագույն փաթեթի ֆինանսավորմանը:
2. Օրենսդրությամբ սահմանել նախա- և հետծննդաբերական շրջանի (140 օր) նպաստ գործազուրկ կանանց համար: Հետծննդաբերական միանվագ խրախուսական գումարի բարձրացում 70%-ի չափով: Հետծննդաբերական նպաստի սահմանում մայրերի համար՝ անկախ զբաղվածությունից (2 տարի ժամկետով):
3. 18-ից բարձր կանանց և աղջիկների համար օրենսդրորեն ապահովել տարեկան պարտադիր անվճար ստուգումներ (արգանդի վզիկի, կրծքագեղձի, իշեմիկ հիվանդությունների): Տեղական կենտրոններում ստուգումներ անցնելու նպատակով կանանց տրանսպորտով ապահովելու համար օգտագործել տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունները: Վերոհիշյալ հիվանդությունների վերաբերյալ հանրությանը իրազեկել բժիշկների հետ մարզեր այցելող հանրային իրազեկման մասնագետների կողմից, սկսել սեռական կրթությունը դպրոցից:

Կանանց համաժողովի ընդունած հայեցակարգի հայերեն և անգլերեն տարբերակները տեղակայված են www.ndi.org. կայքում:

Համաժողովից հետո կկազմվեն աշխատանքային խմբեր, որոնք կձեռնարկեն և կապահովեն առաջարկվող լուծումների իրագործումը: Այն մարդիկ, ովքեր մասնակիորեն կամ ամբողջությամբ ներգրավված են եղել այս խնդիրների բարձրացման գործընթացում, պետք է հետևեն համաժողովի հետագա զարգացումներին՝ հայ կանանց քաղած դասերից օգտվելու համար: Մենք բոլորս բնակվում ենք տարբեր վայրերում, տարբեր մշակույթներ և խնդիրներ ունենք, բայց բախվում ենք միանման հարցերի: Մենք կարող ենք շատ բաներ սովորել միմյանցից՝ի՞նչն է հաջողություն ունեցել, ի՞նչը չի ունեցել, և համընդհանուր կերպով ավելի ուժեղ ու արդար ապագա կառուցել: Ես անհամբեր սպասում եմ դրան:

Ստեֆանի Ֆոսթեր
Կանանց հարցերով անկախ փորձագետ

«ԴԵՂԱՏՈՄՍԵՐԸ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԵՆ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԱՌՋԵՎՈՒՄ»

Համաժողովի մասնակիցներից շատերի պես ես էլ՝ կանանց խնդիրների իմ իմացությամբ ու փորձառությամբ մասնակցեցի հիմնախնդիրների հայեցակարգի մշակմանը: Հատկանշական էր, որ, ըստ համաժողովի ձևաչափի, կանանց հիմնախնդիրների մասին հիմնականում բարձրաձայնում և փորձագիտական կարծիք էին ներկայացնում ոչ թե հրավիրված մասնագետները, այլ կանայք իրենք էին նշում, թե ինչ բացեր կան, իրենց ինչ է անհրաժեշտ, ինչ են ցանկանում արդյունքում ունենալ և ինչպես են պատկերացնում իրենց դերը երկրի կառավարման համակարգում: Ապա, հերթական անգամ պետության ուշադրությունը հրավիրվեց կանանց՝ երկրում առկա հիմնախնդիրներին: Ընդգծվեցին այն քայլերը, որոնք կնպաստեն կանանց դերի բարձրացմանը: Ճիշտ է, ՀՀ կառավարությունն ընդունել է Գենդերային քաղաքականության հայեցակարգը, ինչպես նաև ընդունվել է Գենդերային քաղաքականության 2011-2015թ.թ. ռազմավարական ծրագիրը, սակայն գտնում եմ, որ կանանց հիմնախնդիրների՝ համաժողովի շրջանակներում ձևավորված հայեցակարգի նախագիծը լրացուցիչ միջոց է՝ պատկան մարմինների, կազմակերպությունների և հանրության ուշադրությունը դրանց վրա սևեռելու, խնդիրների լուծմանն ուղղված հստակ քայլեր ձեռնարկելու, ինչպես նաև՝ արդեն իսկ ընդունված հայեցակարգն ու ռազմավարական ծրագիրն առավելագույն արդյունավետությամբ իրականացնելու համար: Քայլ արվեց «կանանց ցանցի» ամրապնդման ուղղությամբ. տարբեր ոլորտներ ներկայացնող կանայք երկրի տարբեր բնակավայրերից համախմբվեցին մեկ ընդհանուր գաղափարի շուրջ՝ նպաստելու ՀՀ-ում կանանց քաղաքական, հասարակական, տնտեսական մասնակցության մակարդակի բարձրացմանը:

Բարձր գնահատանքի է արժանի բոլոր նրանց աշխատանքը, ովքեր նախաձեռնեցին, իրականացրին, իրենց փորձառությամբ խրախուսեցին, ակտիվորեն մասնակցեցին մեր երկրի համար մեծ կարևորություն ունեցող հիմնախնդրների քննարկմանը, որում կարևոր «դեղատոմսեր» առաջարկվեցին: Կանանց՝ տարբեր ոլորտներում և մակարդակներում մասնակցության խթանմանն ուղղված քաղաքականությունը, նմանատիպ միջոցառումներն ու դրանցից բխող գործողությունները մեզ աստիճանաբար մոտեցնում են մեր ընդհանուր նպատակին՝ ունենալ ուժեղ և ժողովրդավար երկիր, որի կառուցման գործին ՀՀ հասարակության զգալի մասը՝ կանայք, ևս ունեն իրենց արժանապատիվ առաքելությունը:

Լիլիթ Ասատրյան«Կին առաջնորդ» ֆորումի համակարգող խորհուրդի անդամ,«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի» նախագահ

«ՄԵՐ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԸ ՄԵԶ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՏԱՆ ՀԵՌՈՒ ԳՆԱԼ»

«Կին առաջնորդ » ֆորումի համակարգող խորհրդի անդամները ևս մի առանձին օր նվիրեցին հայեցակարգի նախագծի մշակմանը:

Փոխադարձ հարգանք և փոխըմբռնում, մեկմեկու լսելու, ինչու՞ չէ՝ զիջելու և ընդհանուր հայտարարի գալու կարողություն.- նման մթնոլորտում անցավ համաժողովը, որ աննախադեպ էր իր ներկայացուցչական կազմով, փորձագիտական խմբի մասնագիտական կարողությամբ, քննարկվող հարցերի ընդգրկման ծավալով և արդյունքների արդյունավետությամբ: Հայեցակարգի նախագծի քննարկումների արդյունավետությունը պայմանավորված էր նաև համաժողովի՝ ԱԺԻ կողմից օպտիմալ կերպով և ճիշտ ժամանակին անցկացված նախապատրաստական փուլով: Հենց այդ ժամանակ տարբեր շահառու խմբերի՝ տեղական ինքնակառավարման մարմինների, երիտասարդ կանանց, պետական կառավարման և ՀԿ-ների, ինչպես նաև «Կին առաջնորդ» ֆորումի համակարգող խորհրդի ներկայացուցիչների ջանքերով ստեղծվեց հայեցակարգի, այսպես ասած, «սևագիր» տարբերակը:

Ըստ իս, համաժողովը նշանակալից էր նաև այն հանգամանքով, որ նրանում մեծ կազմով ներկայացված էին տարբեր մարզերի գյուղական համայնքների ավագանիների կին անդամներ, և նրանց, ինչպես և մյուս մասնակիցների կարծիքներն ու առաջարկությունները հավասարապես լսելի էին համաժողովում: Նրանց համախմբված գործելակերպը հաստատեց այն հանրահայտ ճշմարտությունը, որ երբ մի կին է մասնակցում քաղաքականությանը, նա ինքն է փոխվում, բայց երբ շատ կանայք են ընդգրկվում նրանում, փոխվում է քաղաքականությունը:

Համաժողովի նպատակը ենթադրում է գործողությունների շարունակականություն. դեռ միասին ճանապարհ պիտի անցնենք՝ նախ, հայեցակարգը լրամշակելու, ապա և ՝ կյանքի կոչելու համար: Երբ կինը մենակ չի քայլում, այլ՝ ուրիշ կանանց հետ միասնաբար, ապա շատ հեռու է գնում և անպայման հասնում է հաջողության: Այդ միասնականությունը մեզ՝ կանանց, վստահություն է ներշնչում, որ մենք պատրաստ ենք, պարտավոր ենք և կարող ենք բարեփոխել մեր երկիրը:

Դուստրիկ Մխիթարյան
«Կին առաջնորդ» ֆորումի համակարգող անդամ, ԱԺԿ ներկայացուցիչ

ԱԺԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄՆ Է

2 ԱԺԻ-ն աջակցում է «Ընտրությունը քոնն է»(ԸՔ) ՀԿ-ին, որն ամենամեծ դիտորդական կազմակերպությունն է Հայաստանում: ԸՔ ՀԿ-ի հետ ակտիվ համագործակցությամբ ԱԺԻ-ն 1996թ.-ից ի վեր դիտորդական մասնակցություն է բերել Հայաստանի բոլոր համազգային ընտրություններում: ԱԺԻ-ն զարգացնում է ԸՔ ՀԿ կազմակերպչական ունակությունները և աջակցում ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորված ծրագրի շրջանակներում դիտարկելու և գնահատելու երկրի 100 համայնքում ընտրված պաշտոնյաների գործունեությունը: 2006թ.-ին ԱԺԻ նախաձեռնությամբ ստեղծվել է «Կին առաջնորդ» ֆորումը, որի նպատակը կուսակցություններում, ՀԿ-ներում, ՋԼՄ-ներում, ՏԻՄ-երում և կառավարությունում ներկայացված կանանց աջակցելու, նրանց ներուժը համախմբելու միջոցով կանանց մասնակցությունը խթանող միջավայր ստեղծելն է: Ֆորումի ներկայիս աշխատանքներն իրականացնում է Կանանց համակարգող խորհուրդը, որի ձեռնարկն էր 2009թ.-ին Կանանց առաջնորդության դպրոցի հիմնումը: Դպրոցի միամյա դասընթացներն են անցնում կուսակցություններից, ՀԿ-ներից, ՋԼՄ-ներից և այլ կազմակերպություններից ընտրանքային հիմունքներով հավաքագրված երիտասարդ կանայք:

ԱԺԻ-ն Երիտասարդ առաջնորդների ծրագրի շրջանակներում պատրաստում է ապագա քաղաքական գործիչների, որոնք Երիտասարդների առաջնորդության դպրոցում ձեռք բերած իրենց փորձն ու հմտությունները ծառայեցնում են իրենց ներկայացրած կազմակերպություններում դրական փոփոխություններ կատարելու գործին: ԱԺԻ կողմից ուղղորդվող Երիտասարդական համակարգող խորհրդի առաջնային խնդիրը որոշումների կայացման գործընթացում երիտասարդներին ներգրավելու համար բարենպաստ միջավայրի ձևավորումն է:

ԱԺԻ-ն 2010թ.-ին ստեղծել է նաև Կին թեկնածուների դպրոց: Նպատակն է՝ խրախուսել կանանց ակտիվ մասնակցությունը ՏԻՄ ընտրություններին, մեծացնել նրանց դերը համայնքներում որոշումների կայացման գործընթացում, զինել գիտելիքներով ու հմտություններով՝ արդյունավետ նախընտրական քարոզարշավներ իրականացնելու համար: Մինչ օրս ԱԺԻ-ում վերապատրաստվել է 78 կին թեկնածու, որոնցից 50-ը, հաղթելով տեղական ընտրություններում, դարձել են ավագանու անդամ:

ՀԱՄԱԺՈՂՈՎՆ ԱՎԱՐՏՎԵՑ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Համաժողովի շրջանակներում կազմավորված աշխատանքային խմբերում թեպետ ընդգրկված էին տարբեր տարիքի և տարբեր ոլորտներ ներկայացնող կանայք, սակայն նրանք կարողացան համատեղ կերպով, արդյունավետորեն աշխատել և համաձայնության գալ տարբեր խնդիրների շուրջ: Արդյունքում՝ առանձին ոլորտների վերաբերյալ աշխատանքային խմբերի մշակած լուծումները միաձույլ կերպով դարձան ամբողջական փաստաթուղթ: Վերջինիս մշակմանը մեծ հետաքրքրությամբ, անգամ նկատելի խանդավառությամբ մասնակցեցին իմ վաղեմի համախոհները՝ Վ. Բրյուսովի անվ. լեզվաբանական համալսարանի դասախոս Արուսյակ Գրիգորյանը, բժշկագիտության առաջատար մասնագետներ Ալինա Խանգելդյանը և Եվգենյա Հովհաննիսյանը: Նման ձևաչափով քննարկումները նրանք առանձնացրին բոլոր այն միջոցառումների ու համաժողովների շարքում, որոնց երբևէ մասնակցել էին: Մտավախությունս, թե արդյոք հրավիրվածներին մինչև վերջ կհետաքրքրե՞ն քննարկումները, շուտով ի չիք եղավ: Նրանք ոչ միայն մեծապես հետաքրքրված էին, այլև ոգևորությամբ և շահագրգիռ կերպով մասնակցեցին լսումներին՝ ներկայացնելով իրենց մասնագիտական ու աշխատանքային փորձից բխող կոնստրուկտիվ առաջարկներ:

-Տպավորված եմ համաժողովի մասշտաբայնությամբ և քննարկումների կազմակերպման մշակույթով,- ասաց Ա. Գրիգորյանը: - Այս համաժողովն այնքան բուռն ու հետաքրքիր անցավ, որ ուղղակի ինձ ոգեշնչեց մասնակցելու մինչև վերջ: Կարծում եմ՝ համաժողովի ընթացքում ստեղծված հայեցակարգը կգործի ի նպաստ կանանց: Նրանց մասնակցությունը քաղաքական կյանքում հանրային ուշադրությունը կսևեռի կանանց հիմնախնդիրների լուծման վրա:

Փաստաթղթում տեղ գտած առաջարկություններն առաջիկա ամիսներին լրամշակվելու են դեռևս ձևավորման փուլում գտնվող աշխատանքային խմբերում: Դրանց կազմավորման վերաբերյալ որոշումն ընդունվել է ԱԺԻ կողմից հովանավորվող «Կին առաջնորդ» ֆորումի համակարգող խորհրդի՝ մայիսի վերջին կայացած հերթական հանդիպմանը, որում որոշվել է մշակել կարճաժամկետ և երկարաժամկետ գործողությունների նախագիծ: Խորհրդի անդամների առաջադրած անձանցով կազմավորվելու է չորս մշտական հանձնաժողով, որ համապատասխանաբար ստանձնելու են հայեցակարգում ընդգրկված չորս հիմնահարցի շուրջ աշխատելու պատասխանատվությունը: 10-ական անդամ և փորձագետների

ՀՀ տարբեր մարզերի համայնքների ավագանիները ներկայացնող կանայք ջանադրաբար քննարկում են իրենց առաջ քաշած հիմնախնդիրների լուծման ուղիները և աշխատում տալ դրանց ճշգրիտ ձևակերպումները: Նրանք գերազանցապես ԱԺԻ Կին թեկնածուների դպրոցում ուսուցանված և արդյունքում ՏԻՄ-երում ընտրված գործիչներն են:

խմբեր ընդգրկող հանձնաժողովների ներսում կձևավորվեն ենթահանձնաժողովներ՝ հիմնահարցերի լուծման ուղիների վերաբերյալ առաջարկությունները մասնագիտորեն քննելու, գործողությունների հստակ քայլեր նախանշելու և հետագայում դրանց իրագործման ընթացքն ուղղորդելու համար: Աշխատանքային խմբերում կընդգրկվեն համաժողովի ներկայացուցիչներ՝ Երևանից և մարզերից, քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական հասարակության անդամներ: Մասնագիտական խորհրդատվություն ստանալու նպատակով կհրավիրվեն նաև գիտական ոլորտի, միջազգային կազմակերպությունների և կառավարման մարմինների փորձագետներ, որոնք իրենց գիտելիքներով ու փորձառությամբ կաջակցեն հիմնախնդիրների վերաբերյալ քաղաքական առաջարկությունները լրամշակելու գործում:

Եկատերինա Սիմոնյան
«Կին առաջնորդ» ֆորումի համակարգող խորհրդի նախագահ,
«Համագործակցություն» ՀԿ նախագահ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՉՈՒՇԱՑԱՆ

«ԱՆՑՈՂԻԿ» ՏԵՂԵՐ ԿԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երկրի խորհրդարանը սահմանել է ընտրական ցուցակներում կանանց ընդգրկելու նոր կարգ:

«Կանայք քաղաքականության մեջ» համաժողովի ընդունած պլատֆորմի թերևս ամենից կարևոր, ռազմավարական նշանակության դրույթը վերաբերում է գենդերային հավասարությունն ապահովելու նպատակով ընտրական օրենսդրության վերանայմանն ու համամասնական ընտրացուցակներում կանանց ներկայացվածության բարձրացմանը: Իբրև համաժողովի անմիջական արձագանք պետք է դիտել պլատֆորմի նախագծի հրապարակումից ուղիղ մեկ շաբաթ անց՝ մայիսի 26-ին Ազգային Ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ ընդունված « ՀՀ ընտրական օրենսգրքի» «Պատգամավորների թեկնածուների առաջադրումը և գրանցումը » սահմանող 21-րդ գլխում կատարված փոփոխությունը: Հիշեցնենք, որ դեռևս առաջին ընթերցմամբ ընդունված նոր օրենսգրքի՝ ԱԺ համամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուների առաջադրման կարգը սահմանող 107-րդ հոդվածի 2-րդ կետում ասված էր, որ «Ազգային Ժողովի համամասնական ընտրակարգով կուսակցության ընտրական ցուցակի առնվազն 20 տոկոսը պետք է լինեն կանայք, ընդ որում ցուցակի առնվազն յուրաքանչյուր տասներորդը պետք է լինի կին»:

Երկրորդ ընթերցմամբ ընդունված տարբերակում 107-րդ հոդվածի 2-րդ կետը զգալիորեն լրամշակվել է: Նրանով համամասնական ընտրակարգով կուսակցության ընտրական ցուցակում կանանց ընդգրկելու և ըստ համարների բաշխելու նոր կարգն ավելի դյուրին կդարձնի կանանց մուտքը երկրի խորհրդարան:

Ազգայի Ժողովի համամասնական ընտրակարգով կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրական ցուցակի 2-րդ համարից սկսած ցանկացած ամբողջ թվով հնգյակներում (2-6, 2-11, 2-16 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը), ըստ օրենքի պահանջի, յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 80 տոկոսը: Հետևյալ կանայք ընտրական ցուցակներում կունենան օրենքով երաշխավորված՝ այսպես կոչված «անցողիկ » տեղեր, ինչը հնարավորություն կտա ապագա խորհրդարանում որոշակիորեն լրացնելու գենդերային հավասարության ներկայումս առկա ակնառու ճեղքվածքը:

Դրան զգալիորեն կարող է նպաստել նաև այն փոփոխությունը, որով նախընտրական գրավը մեծամասնական թեկնածուների համար 2.5 միլիոն դրամից իջեցվել է մինչև մեկ միլիոն դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՄ ՉԷ ՔՎՈՏԱՎՈՐՄԱՆԸ

Վարչապետ Տ. Սարգսյանը գտում է, որ կանանց թիվը պետք է ավելանա թե՛ խորհրդարանում և թե՛ կառավարությունում:

Կանանց համաժողովի ավարտից անմիջապես մեկ օր հետո՝ մայիսի 20-ին, ՀՀ կառավարության նիստում հավանության է արժանացել ՀՀ գենդերային քաղաքականության՝ 2011-2015 թ.թ.-ի միջոցառումների ծրագիրը: Վարչապետ Տ. Սարգսյանը նշել է, որ ծրագիրը հասարակական քննարկումներ է անցել: Հիշեցրել է, որ բանավեճ է եղել, թե արդյոք Հայաստանում քվոտավորում պե՛տք է իրականացվի՝ կարևորելու համար կանանց դերակատարությունը հասարակական-քաղաքական կյանքում, պարտադրվի, որպեսզի կուսակցությունները, նախընտրական ցուցակներ կազմելիս, անպայման որոշակի հարաբերակցություն ապահովեն, ու կանանց թիվն ավելանա թե՛ խորհրդարանում և թե՛ կառավարությունում:

-Եթե ուզում եք,- ասել է վարչապետը,-որ այս ռազմավարությունը դառնա իրականություն, այն պետք է քննարկվի ԱԺ-ում, և լսումներ լինեն: Մեր նպատակն է, որ բոլոր հասարակական կազմակերպությունները, կուսակցությունները հավանության արժանացնեն այս ծրագիրը:

ՕՐԵՆՍԴԻՐ և ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՊԵՏՔ է ՍՏԵՂԾԵԼ ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՀԱՏՈՒԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

ՀՀ բազմաթիվ օրենքներով սահմանված է քրեական, վարչական և այլ տեսակի պատասխանատվություն՝ կնոջ հանդեպ բռնություններ գործադրելու, կնոջ սեռական անձեռնմխելիությունը ոտնահարելու դեպքերի համար: Սակայն օրենքի պահանջն իրականացնելու, կանանց իրավունքներն արդյունավետորեն պաշտպանելու համար անհրաժեշտ է օրենսդիր և գործադիր մարմիններում ստեղծել, իսկ եթե գործում են՝ ակտիվացնել կանանց և երեխաների հիմնախնդիրներով զբաղվող հատուկ կառույցներ: Վերջիններիս առաջնահերթ խնդիրը պետք է դառնա կանանց իրավունքների գործուն պաշտպանությունը, կանանց՝ հասարակական և պետական գործունեության մեջ ներգրավելուն ուղղված արդյունավետ միջոցների ձեռնարկումը, ՀԿ-ների գործունեության ակտիվացումը: Առանձնակի ուշադրություն պետք է դարձնել հեռավոր մարզերում և սահմանամերձ վայրերում բնակվող կանանց հիմնախնդիրներին, ձեռնարկել սոցիալական և կենցաղային պայմանների բարելավմանն ուղղված միջոցառումներ: Գենդերային հավասարությանը և կանանց հուզող խնդիրներին պետք է հաճախակի անդրադառնալ՝հեռուստատեսային հաղորդաշարերով, բանավեճերով, ԶԼՄ-ներով առկա հիմնախնդիրները լուսաբանելով: Գենդերային հավասարության թեմայով պարբերաբար պետք է կազմակերպել սեմինարներ, հանդիպումներ, գործնական քննարկումներ՝ հատկապես գյուղաբնակ կանանց շրջանում:

Հերիքնազ Կարապետյան
ԸՔ ՀԿ ներկայացուցիչ, իրավաբան

Քննարկվող հիմնախնդիրների լուծումների շարքում մշակվեցին երիտասարդությանն անմիջականորեն առնչվող հարցեր, մասնավորապես մշակվեցին երիտասարդ կանանց բժշկական սպասարկման մատչելիությունն ապահովելու, իրազեկումը բարձրացնելու, տնտեսական մասնակցությունը խթանելու կոնկրետ մեխանիզմներ: Առհասարակ, այս համաժողովին մասնակցությունը մեր՝ երիտասարդներիս ինքնարտահայտման, ինքնադրսևորման առավել լայն հնարավորություն էր:
Կարծում եմ՝ երիտասարդների ակտիվ մասնակցությունը դարձավ համաժողովի արդյունավետության գրավականներից մեկը՝ իբրև առկա խնդիրների շուրջ նոր մոտեցումների, նոր պահանջների, նոր աշխարհայացքի ներդրման արդյունք: Մենք ևս հետևողական ենք լինելու այս հարցերի իրականացման հետագա ընթացքին:

Գայանե Պետրոսյան
երիտասարդական համակարգող խորհրդի նախագահ

ԿԱՄԱՎՈՐԻ ՔԱՐՏ

Անուն Ազգանուն .....

Տարիքը .....

Կազմակերպությունը .....

Հեռ. համարը, էլ. հասցեն .....

Ինչո՞վ կարող եք օգտակար լինել մեր գործունեությանը

.....

Խնդրում ենք լրացված քարտն ուղարկել ԱԺԻ գրասենյակ՝
Երևան 0019 Բաղրամյան 1,բն 24 հասցեով:
Հեռ.՝ 010 58 05 60, 010 54 61 53, 010 58 20 64,
էլ. հասցե՝ atavadyan@ndi.org

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՀԱԳՐԳԻՌ է ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՄԲ

«Ընտրությունը քոնն է» հասարակական կազմակերպությունը (ԸՔ ՀԿ) ևս՝ իր շարքերում ընդգրկված ակտիվ, ժողովրդավարական գործընթացների կայացմամբ շահագրգիռ հինգ տասնյակից ավելի կանանց ինտելեկտուալ ներուժով մասնակցեց կանանց հիմնախնդիրների հայեցակարգի մշակմանը: Նախ, տարբեր ոլորտներում մասնագիտացած, հանրային աշխատանքի փորձառություն ունեցող շուրջ երեք տասնյակ ԸՔ ՀԿ անդամներ մասնակցել են ԱԺԻ կազմակերպած գործնական դասընթացին: Նրանց կողմից են առաջ քաշվել օրեր անց համաժողովի քննարկմանը ներկայացված հիմնախնդիրների մի շարք նախնական ձևակերպումներ և դրանց լուծման ուղիների առաջարկների նախագծեր:

Այսպես, հիմնախնդիրների պլատֆորմի նախագծում տեղ է գտել կանանց քաղաքական մասնակցությունը խթանելուն ուղղված այնպիսի հայեցակարգային հոդված, ինչպիսիք է՝ գենդերային հավասարությունն ապահովելու նպատակով ընտրական օրենսդրության վերանայումը: ԸՔ ՀԿ ներկայացուցիչների կողմից բարձրաձայնվել է առաջարկ՝ կառավարման բոլոր մակարդակներում՝ թե՛ նշանակվող և թե՛ ընտրվող պաշտոններում ևս կանանց համար բարձր քվոտաներ սահմանելու մասին: Մշակել ենք կանանց տնտեսապես խրախուսելու որոշակի ուղիներ: Ընտանեկան և գենդերային բռնության հիմնախնդրի լուծումները մշակելիս՝ առաջ ենք քաշել գենդերային հավասարության վերաբերյալ ուսումնական ծրագիր կազմելու գաղափարը: Գտնելով, որ հիմնախնդիրն ունի նաև կրթամշակութային արմատներ՝ մենք ընդգծել ենք գենդերային հավասարության սկզբունքներով վաղահաս տարիքից աճող սերնդին կրթելու և դաստիարակելու անհրաժեշտությունը: Ավելին, առաջարկել են հանրային ԶԼՄ-ներով հեռարձակել կրթադաստիարակչական առավել լայնածավալ ու հասարակության բոլոր շերտերին հասցեագրված ծրագրեր: Գենդերային հավասարության մասնայական քարոզչությունը, հանրամատչելի ուսումնակրթական հաղորդումներն ու հոդվածներն ի զորու են բարձրացնել լայն հանրության իրազեկվածության մակարդակը: Կանանց իրական իրավահավասարության հաստատման և գենդերային բռնությունները կանխարգելելու համար հանրային իրավագիտակցության և մշակութային արժեքների ձևավորումը նույնչափ կարևոր է, որքան՝ գենդերային հավասարությունը երաշխավորող օրենքների ընդունումը:

Նունե Մանուկյան
ԸՔ ՀԿ ներկայացուցիչ, Երևանի թիվ 194 դպրոցի տնօրեն

«ՀԱՅԵՑԱԿԱՐԳՆ ՈՒՂԵՐՁ է ԵՎ ՈՒՂԵՑՈՒՅՑ»

Համաժողովի աշխատանքներին ակտիվորեն մասնակցեց նաև «Կին առաջնորդ» ֆորումի համակարգող մարմինը, որի իրականացրած ծրագրերից հատկապես ուզում եմ նշել ,Կանանց առաջնորդությանե և ,Կին թեկնածուներե ծրագրերը: Համաժողովի առնչությամբ հիշատակեցի սրանք, քանի որ և՛ առաջին ծրագրում ներգրավված երիտասարդները, և՛ երկրորդի իրականացման շնորհիվ ՏԻՄ-երում ընտրված կանայք նույնպես մասնակցում էին համաժողովի աշխատանքներին: Համաժողովը մեծ դեր ունեցավ շփումների առումով: Նախ, հնարավորություն ունեցանք ծանոթանալու ԱՄՆ-ի և Եվրոպայի հայտնի կին գործիչների անցած ուղուն, ուսումնասիրել նրանց փորձը և դասեր քաղել դրանից: Մյուս կողմից, Հայաստանի տարբեր շրջաններից ժամանած ավագանու անդամ կանայք, բացի միջազգային փորձի ուսումնասիրությունից, առիթ ունեցան հանդիպելու միմյանց, ձեռք բերեցին նոր ծանոթություններ, կապեր, ինչը հետագայում զարգացնելով՝ կարող են ներհանրապետական ցանց ստեղծել: Նրանք նաև հարստացան նոր գիտելիքներով ու թարմ գաղափարներով, ինչը տեղերում կնպաստի իրենց հետագա աշխատանքներին: Այս առումով համաժողովը լավ առիթ էր հասարակության տարբեր շերտերը, ոլորտները և բնակավայրերը ներկայացնող կանանց համար աշխատելու, շփվելու և հաղորդակցվելու միմյանց հետ, ինչի առիթը չէինք ունենում մեր առօրյայում և գործունեության ընթացքում: Այսպիսի անբռնազբոս, անկաշկանդ մթնոլորտում ընթացող քննարկումների արդյունքում էր, որ ձևակերպվեց հայեցակարգը, որը հավակնում է նվազեցնել կանանց՝ քաղաքական գործընթացներում ներգրավվածության խոչընդոտները: Այն մի կողմից կարող է յուրատեսակ ուղեցույց հանդիսանալ միջոցառումների, ծրագրերի, ուղերձների և հայտարարությունների մշակման համար, մյուս կողմից՝ իշխանությունների և կուսակցությունների ուշադրությունը հրավիրել կանանց խնդիրներին:

ԱՄԱԼՅԱ ԵՆԳՈՅԱՆ
«Կին առաջնորդ» ֆորումի համակարգողխորհրդի անդամ